ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ապրիլի 2-ին՝ Նոր կիրակի օր, Վեհափառ հայրապետը հովվապետական այցելություն կատարեց Երևանի ս. Սարգիս եկեղեցուն՝ սատկի տոնի առիթով։

Ն. Ս. Օծությունը առավոտյան ժամը 9.30-ին Մայր Աթոռից ժամանում է մայրաքաղաք և ս. Սարգիս եկեղեցու առաջ, մայրավանքի ներքո, եկեղեցական թափորով «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի։

Առաջնորդանիստ եկեղեցին լիքն է հաստատցյալներով։ Հոծ բազմությունը ջերմորեն և ուխտավորի երկյուղածությամբ դիմավորում է Հայոց Հայրապետին։

Տոնականորեն զարդարված ու վերջերս նորոգված եկեղեցում, Արարատյան թեմի փոխանորդ տ. Վահան եպս. Տեր-յանը, թեմական հոգևորականության, թեմական, եկեղեցական վարչության և հավատացյալների, սրտագին ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությունը։

Ժամը 11-ին սկսվում է հայրապետական սնդիսավոր ս. պատարագը։

Ս. Սեղանին սպասարկում են տ. Հայկազուն, տ. Վահան սրբազանները, տ. Կյուրեղ տ. Ներսես վարդապետները, տ. Կոմիտաս տ. Ռուբեն քահանա հայրերը։

Ս. Սարգիս եկեղեցու երգեցիկ խումբը դրնատնից հնչեցնում է ս. պատարագի եկեղեցական երգեցողությունը։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց» բնաբանով։

«Այս առավոտ, այս սուրբ կամարների տակ, Քրիստոսի հարության ավետիսի հետ, ողջո՛ւյն և օրհնությո՛ւն աստվածային բոլորիդ ս. էջմիածնից, Ամենայն Հայոց Հայրապետության գահից ս. Լուսավորչի անմար կանթեղից։

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Արարատյան թեմի փոխանորդ տ. Վահան եպիսկոպոսին։

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն հոգևորական դասուն՝ այս սուրբ տաճարի պահապաններին, թեմական և եկեղեցական վարչությանց անդամներին, պաշտոնեից, որոնք իրենց նվիրյալ աշխատանքով շեն ու պայծառ են պահում մեր եկեղեցիները Արարատյան թեմում, ողջո՛ւյն և օրհնությո՛ւն երգեցիկ խմբին, որ իր քաղցր ձայնով առավել է քաղցրացնում մեր սրբազան արարողությունները ու մեղեդիները։

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն բոլորին։

Մի շաբաթ է անցել սուրբ Զատկից, բայց մենք քառասուն օրեր շարունակ ս. Հարության տոնի շնորհների ներքո ենք գտնվում։ Այդ մեր ուրախությունն է։ Մենք ամեն օր հարության շնորհն ու ապրումը ունենք մեր սրտերում և ոչ թե միայն զատկական օրերին։ Արդարև, մի օր միայն նշում ենք հա-

ության տոնը, բայց հավատում ենք, որ Փրկչի ճշմարիտ հարության շնորհները տարածվում են ամբողջ տարվա օրերի վրա: Զատիկը մեր հոգևոր կյանքի բարձունքն է, որի կատարներից լույս է հառագայթում տարվա բոլոր օրերի վրա:

Եթե կա մարդեղությունը, փրկագործությունը, հարությունը, ուրեմն Քրիստոս որպես հավիտենական կյանք բաշխվում է մեզ միշտ, կենարար ու կենդանարար:

Քրիստոս տառապեց, շարչարվեց և խաչի վրա մահը ճաշակեց՝ մեզ և համայն մարդկության համար: Մենք խորունկ ապրումը ունենք այն բանի, որ Աստծու Որդին, մարդու Որդին Իր կյանքը զոհեց, որպեսզի մարդիկ հոգով բարձրանան նյութի կապանքներից և իրենց սրտում վառ պահեն բարոյական, իմացական, ոգեկան ճշմարտությունները ու սկզբունքները, որ մարդիկ սիրեն միմյանց անշահախնդիր սիրով ու խաղաղ ապրեն հավիտենական այդ ճշմարտությունների լույսին մեջ, վասնզի նրանց մեջ է խտանում քրիստոնեական սկզբունքների արդարությունն ու հաղթանակը:

Մենք որպես Պետք Հայաստանյայց առաքելական եկեղեցու, անա տասներկու տարի, ս. Հարության շնորհների ներքո, կատարում ենք Մեր պարտականությունները մեր եկեղեցու և մեր ժողովրդի հանդեպ: Մեր կյանքի նպատակն է զորացնել, շենացնել է՛լ ավելի ս. Էջմիածինը, հոգևոր, եկեղեցական կյանքը մեր հայրենիքի մեջ, առավել կենդանություն տալ մեր սրբավայրերին, մեկ և անբաժան պահել ու պահպանել հայ եկեղեցին, որ ի սիյուս աշխարհի, և նաև աղոթել, աշխատել հանուն խաղաղության ամբողջ աշխարհում:

Ս. Սարգիս եկեղեցու տված Մեր հովվապետական այցելության առիթով նաև ողջո՛ւյն և օրհնությո՛ւն բաղխամայր մեր Երևանին, որը պատկերն է մեր ժողովրդի վերածնդության:

Ողջո՛ւյն ու օրհնությո՛ւն մեր հայրենի բարեխնամ կառավարության, մեր մտավորականության, մեր հարտարապետներին, բանվորներին, որոնք աճեցնում, ծաղկեցնում ու գեղեցկացնում են մեր մայրաքաղաքը, որը դարձել է աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկը:

Ա՛յդ է նաև ապրումը բովանդակ հայ ժողովրդին:

Թո՛ղ խաղաղություն լինի ողջ աշխարհի վրա:

Թո՛ղ խաղաղություն լինի բոլոր հայ երդիկների տակ:

Որպես եկեղեցի և ժողովուրդ՝ կատարենք ինչ բարի է, գեղեցիկ, արդար և օգտակար, որպես Լուսո որդիներ, Աստծու որդիներ՝ արժանի լինելու համար այս սուրբ առավոտյան, երկնքի կատարներից իջնող հոգևոր իմացական շնորհներին: Ամեն»: